Ղևոնդ Ալիշան

Պլպուլն Ավարայրի

Ո՞նց գաս, իմ լուսնակ, հեզիկ ու հանդարտ
Համասփյուռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եվ ի նահապետս, որ մըտոք մոլար
Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,
Ուր քաջ ու աննըման հարք մեր հայկազունը
Ընկան զետ հըսկա, կանգնեցան զվարթունք.
Միթե գա՞ս սրփոել ոսկերաց սրրբոց
Ձյունափայլ ամպեդ ոսկեթել ծածկոց,
Թե ճերմակ ճակտիդ՝ թեպետ և պայծառ
Քաջացս արենեն կատե՞ս կարմիր վառ.
Թե լրոիկ-մընջիկ ափշի՞ս տակավին,
Թէ ի՞նչպես ընկավ Վարդանն ահագին,
Մահու սև ըստվերն ի սիրտ թըշնամյաց,
Ջհոգին ձրգելով յերկին առ աստված:
Դու այլ, ո՛վ Տրդմուտ, տրտում ու արյունոտ,
Որ լալով ոլրիս ի մեջ շամբերուդ.
Եվ հովիկդ, որ գաս ի Մակվա քարեն
Կամ ի ծեր Մասյաց սրրբազան սարեն.
Դու այլ ինձ նըման դողդող և երեր
Թույլ թևոք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառե անտառ, տերևե տերև
Կոծկոծելով գաս ի դաշտիս վերև,
Ձայս մաշած շընչիս վերջին հառաչանք

Ձրգել ի Հայոց սրրտից արձագանք:
Ո~հ դու բարեկամ այրած սրրտերու,
Խոսնակ գիշերո, հոգյակ վարգերու,
Երգե՛ պրլպուլիկդ, երգե՛ ի սարեդ,
Ձանմահ քաջքն Հայոց երգե՛ հոգվույս հետ.
Թադեի վանուց ձենիկդ ինձ դիպավ,
Սրրտիկս, որ ի խաչն էր կիպ, թունտ առավ.
Ի խաչին թևեն թրռա ու հասա,
Գրտա զքեզ ի դաշտ քաջին Վարդանա:
Պրլպո՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին,
Թե չէ հավ՝ պրլպուլ մեր Ավարայրին,
Եղիշյա հոգյակն է քաղցրազրուցիկ,
Որ զՎարդան ի վարդրն տեսնու կարմրիկ.
Ձրմեռն յանապատ կու գնա կա ի լաց,
Գարունն յԱրտազ գա ի թուփ վարդենյաց,
Երգել ու կանչել յԵղիշեին ձայն
Թե պատասխանիկ մ՚արգյոք տա Վարդան:
Թե կիսահոգի պրլպուլիս նրման
Ձենիկս հասնի ձեզ, որդի~ք Թորգոմյան,
Որդի~ք, որոնց հարք քաջք ու առաքինիք
Լրցուցին զդաշտեր, գրրքեր ու զերկինք.
Թե ի ծով սրտիդ կաթիլ մ՚արունիկ
Կա թե Հայ աղբյուրրն կամ Պահլավիկ,
Թե զփառքն հայրենյաց ձեզ այլ գրրեք փառս,
Հետ նահապետիս ելեք ի յԱրտազ: